

Վրացական հեռուստատեսությունը դատի է տվել ամերիկյան ֆիլմի հեղինակներին

Հունիս 24, 2011

Վրացական հեռուստատեսությունը դատի է տվել ամերիկյան ֆիլմի հեղինակներին



[5_dney_v_avguste_5_Days_of_War_2011_DVDRip_1308462254-239960.jpeg](#) [1]

Գործի քաղաքի «Թրիալետի» հեռուստաընկերությունը դատի է տվել «Պատերազմի 5 օր» ֆիլմի հեղինակներին՝ ռեժիսոր Ռեննի Հարլիին, պրոդյուսերներ Պապոնա Դավիդայային և Կոբա Նակոպիային, հեռուստաընկերության արժանապատվությունը և հեղինակությունը վիրավորելու համար: Այս մասին հեռուստաընկերությունը հայտնել է հունիսի 23-ին՝ պնդելով, որ ֆիլմը թյուր տեղեկատվություն է պարունակում:

Ֆիլմի դրվագներից մեկում օտարերկրյա լրագրողները տեսանյութեր են բերում մի հեռուստաընկերություն, որի դարպասները փակ են գտնում: Դրվագում պարզ երևում է հեռուստաընկերության լոգոն: Հենց այս դրվագն էլ հանդիսանում է «Թրիալետի»-ի բողոքի պատճառ:

«Թրիալետի»-ի հիմնադիր Բադրի Նանետիշվիլին պնդում է, որ պատերազմական գործողությունների ընթացքում հեռուստաընկերությունը մեկ վայրկյան անգամ չի փակվել: Հեռուստաընկերության շենքում գործել է միջազգային մեդիա-կենտրոն, և միջազգային լրագրողները ումբակոծություններից առաջ վերջինն են եղել, որ լքել են շենքը: Նանետիշվիլին համոզված է, որ նման դրվագը քաղաքական պատվեր է և հատուկ արված է՝ հեռուստաընկերությանը վարկաբեկելու համար:

Ֆիլմի պրոդյուսերներից մեկը՝ Կոբա Նակոպիան, ով խորհրդարանի անդամ է և ֆինանսավորել է ֆիլմը, պնդում է, որ «Թրիալետի» մեդադրանքներն անհեթեթ են: Ըստ նրա՝ պատերազմի օրերին ոչ միայն այդ հեռուստաընկերությունը, այլ նաև Գործի քաղաքի մնացած բոլոր կազմակերպությունները չէին աշխատում: Նակոպիան կտրականապես բացառում է որևէ քաղաքական կոնտեքստի առկայությունն այդ ֆիլմում:

Դատական գործընթացը կսկսվի մոտ օրերս:

Աղբյուր: [Media.ge](#) [2]

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեր որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[ԼՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղքատ երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/node/1340>

Links:

[1]
http://www.jnews.am/files/5_dney_v_avguste_5_Days_of_War_2011_DVDRip_1308462254-239960.jpe

g

[2] <http://www.media.ge/en/node/41573>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>